ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի կողմից 2020 թ. կատարված աշխատանքների մասին

Ներդրումներ և այլ ծրագրեր

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակում մարզպետարանը աջակցել է Թուֆենկյան հիմնադրամի կողմից Արենի գյուղում կառուցվող հյուրանոցային համալիրի (մոտավորապես 700 մլն ՀՀ դրամ արժողությամբ) ենթակառուցվածքների պետական միջոցներով ստեղծմանը:

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում քննարկումներ են իրականացվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի համապատասխան մասնագետների հետ, որոնց ընթացքում ներկայացվել է 5 ծրագիր՝ Արենի բնակավայրում միջոցառումների հրապարակի կառուցում՝ իր ենթակառուցվածքներով, Սմբատաբերդի ճանապարհի վերանորոգում, Ջերմուկի զբոսայգու վերանորոգում, Մարտիրոսի վիմափոր եկեղեցու ճանապարհի վերանորոգում, Շատիվանքի ճանապարհի վերանորոգում: Ծրագրերից առաջին երեքը հավանության են արժանացել և ընդգրկվել Համաշխարհային բանկի կողմից 2020-2022 թվականներին իրականացվող ծրագրերի ցանկում: Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր և ներկայացվել են ՀՀ կառավարություն, ինչպիսիք են՝ Նորավանքի կիրճի, Եղեգիսի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը:

Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվել և հիմնանորոգվել է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի միջով անցնող, Արտաբույնք և Հորբատեղ բնակավայրերն իրար կապող մոտ 6,8 կմ երկարությամբ ավտոճանապարհը: Վերանորոգված ճանապարհը հանդիսանում է մարզի զբոսաշրջային կարևոր ուղիներից մեկը, քանի որ ճանապարհի հարակից տարածքում են գտնվում Սմբատաբերդ ամրոցը, Ցախացքար եկեղեցական համալիրը, Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին և պատմամշակութային այլ հուշարձաններ:

Սուբվենցիոն ծրագրեր

2020 թվականին սուբվենցիայի հայտերի գնահատման հանրապետական միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատված 27 ծրագրով ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքներում իրականացվել է խմելու և ոռոգման ջրագծերի, խմելու ջրագծերի գլխամասային կառույցների, կոյուղագծերի, արտաքին լուսավորության ցանցի, մեքենատրակտորային պարկի և հենապատի կառուցման, կրթական և մշակութային օբյեկտների վերանորոգման, ներհամայնքային

փողոցների ասֆալտապատման, գազիֆիկացման համալրման աշխատանքներ, ինչպես նաև հակակարկտային կայանների տեղադրում:

2020թ. Վայոց ձորի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր ընդհանուր գումարը կազմել է 2 մլրդ. 517 մլն /Երկու միլիարդ հինգ հարյուր տասնյոթ միլիոն/ ՀՀ դրամ, որից համայնքների ներդրումը կազմում է 937,3 մլն /Ինը հարյուր երեսունյոթ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ: